ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<25>> մայիսի 2015թ. **N 51**

ք. Եղեգնաձոր

ՎԻՐՈՒՍԱՅԻՆ, ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ՝ ԱՐՏԱԸՆԴԵՐԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՓՈԽԱՆՑՎՈՂ ՀԵՊԱՏԻՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1913-Ն որոշման 2-րդ հավելվածի 11-րդ կետի 1-ին ենթակետը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում վիրուսային, մասնավորապես՝ արտաընդերային ճանապարհով փոխանցվող հեպատիտների կանխարգելման մասնագիտական հանձնաժողով:
2. Հաստատել հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:
3. Հաստատել վիրուսային, մասնավորապես՝ արտաընդերային ճանապարհով փոխանցվող հեպատիտների կանխարգելման մասնագիտական հանձնաժողովի գործունեության աշխատակարգը՝ համաձայն N 2 հավելվածի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2015 թվականի մայիսի 25
N 57 որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՎԻՐՈՒՍԱՅԻՆ, ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ՝ ԱՐՏԱԲՆԴԵՐԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՓՈԽԱՆՑՎՈՂ ՀԵՊԱՏԻՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1.Հարությունյան Մելս - ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ,հանձնաժողովի նախագահ,

2. Սարգսյան Հեղինե - հանձնաժողովի քարտուղար,

3. Շահբազյան Սամվել - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ,

4.Շիրինյան Ենոք - ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Վայոց ձորի մասնաճյուղի բժիշկ-համաճարակաբան, <<Եղեգնաձորի ԲԿ>>ՓԲԸ-ի և <<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ի է բժիշկ-համաճարակաբան, հանձնաժողովի անդամ,

5.Խաչատրյան Հրայր – Առողջապահական պետական տեսչության Վայոց ձորի մարզային կենտրոնի բժիշկ-համաճարակաբան, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),

6.Հանեսյան Էմմա - <<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ի ինֆեկցիոն բաժանմունքի վարիչ, հանձնաժողովի անդամ,

7.Գալստյան Արտաշես - <<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ, հանձնաժողովի անդամ,

8.Նալբանդյան Մանուշակ - <<Ջերմուկի ԱԿ>> ՓԲԸ-ի տնօրեն, հանձնաժողովի անդամ,

9. Ասատրյան Կարեն - <<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ, հանձնաժողովի անդամ,

10. Ծերունյան Բյուրեղ - Առողջապահական պետական տեսչության Վայոց ձորի մարզային կենտրոնի բժիշկ-համաճարակաբան, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ)

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար **Կ.ՍԱՀԱԿՅԱՆ**